

ալ յաճախ կամայական ու զիտումնաւոր  
 են: Տայոց աշխարհի մեր ուսումնասիրու-  
 թեանց առթիւ յաճախ գտանք այս մասին  
 փաստեր: Յամենայն դէպս թէ քրիստոնեայ  
 եւ թէ մահմետականացած Համշէնցիք եւ  
 Սեւ-Գեոցիք բաւական մեծ թիւ մը կը  
 կաղմեն:

#### 4.

#### Բաբերդ ու Սպեր:

Պոնտական լեռնաշղթային ջրարաշխ  
 գագաթներէն սկսեալ դէպ ի հարաւ իջնող  
 ձորերուն ստորոտէն կ'անցնի Ճորոխ, որ Կարնոյ  
 մօտերէն բղխելով շրջան մը կ'ընէ մինչեւ  
 Բաբերդ, դառնալու համար դէպ ի Սպեր,  
 Բերդազրակ ու Արդուին եւ այնուհետեւ  
 դէպ ի Սեւ-ժոպ: Ընդհանուր առմամբ Սեւ-  
 Գետի թիկունքը կը վերաբերէր Բարձր-  
 Հայոց (Բաբերդ-Սպեր), Համշէնի թիկունքը՝  
 Տայոց (Արսեաց-փոր) գաւառներուն:

Բաբերդի եւ Սպերի, Բազրատունեաց  
 հայ թագակապ ասպետաց այս հին նիս-  
 տերուն<sup>1</sup> պատմութիւնը հին ու երկար է:  
 Այս տեղեաց հայ-մահմետականաց իրերն

<sup>1</sup> Հմմտ. Բուզ. Ե, 107. ու Խոր. Բ. 15 եւն: